

Գեղարքունիքի մարզպետարանում քննարկվեց Վարդենիսի տարածաշրջանի համայնքների խոշորացման ծրագիրը

30.05.2017

Գեղարքունիքի մարզպետարանում ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի պաշտոնակատար Դավիթ Լոքյանը եւ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը հանդիպման էին հրավիրել Վարդենիսի տարածաշրջանի համայնքների ղեկավարներին՝ քննարկելու պետական բարեփոխումներով նախատեսված բազմաբնակավայր համայնքների խոշորացման ծրագիրը: Դավիթ Լոքյանը, սկսելով հանդիպումը, նշեց, որ ՀՀ կառավարության բարեփոխումների շրջանակներում որդեգրվել է մի սկզբունք, ըստ որի աստիճանաբար Հայաստանի Հանրապետությունում պետք է իրականացվի համայնքների խոշորացման ծրագիրը, որի արդյունքում եւ պետք է գնալ վարչատարածքային փոփոխությունների Մենք որդեգրել ենք համայնքների խոշորացման սկզբունքը, քանի որ ներկա ռեսուրսներն անբավարար են համայնքների բնականոն զարգացումն ապահովելու համար: Այլևս հնարավորություններ եւ ռեսուրսներ չունի առանձին յուրաքանչյուր համայնք՝ ծրագրային գաղափար դնելու, բյուջե մեծացնելու եւ մնացած խնդիրները լուծելու համար: Մենք Հայաստանում ունենք մոտավորապես 400 համայնքներ, որոնց բյուջետային եկամուտները հնարավորություն չեն տալիս՝ զարգանալու, - նշեց նախարարի պաշտոնակատարը: Ապա Դավիթ Լոքյանը ներկայացրեց կատարված աշխատանքների ընթացքն Հայաստանի այն խոշորացված 18 բազմաբնակավայր համայնքներում, որոնք միավորվել են բարեփոխումների եւ համայնքների խոշորացման ծրագրի արդյունքում, հավաստիացնելով, որ կարճ ժամանակի ընթացքում բոլոր տեղերում արդեն նկատելի են դրական փոփոխությունները, կատարված ներդրումները, զարգացման հուսալի ընթացքը: Վերցնենք խոշորացված համայնքների ներկայիս պատկերը: Ի՞նչ է կատարվել այդ համայնքներում: Իրականացվել են ճանապարհաշինական աշխատանքներ, կառուցվել են ջրագծեր, մաքրվել սելավատարներ, անցկացվել գիշերային լուսավորություն, համայնքի կարիքների համար գնվել է անհրաժեշտ տեխնիկա, բնակիչներին աջակցություն է ցուցաբերվել՝ գյուղատնտեսական աշխատանքները ավելի արդյունավետ իրականացնելու համար: Ստեղծվել են նոր աշխատատեղեր՝ ըստ անհրաժեշտության, եւ կրճատվել են այն հաստիքները, որոնք համայնքում որեւէ գործառույթ արդեն չունեն,- փաստեց նախարարի պաշտոնակատարը: Նա միաժամանակ համայնքների ղեկավարներին ծանոթացրեց նոր փոփոխություններով սահմանված համակարգին, խոշորացված համայնքի ղեկավարի եւ բնակավայրերի վարչական ղեկավարի իրավասություններին: Վարչական ղեկավարի աշխատավարձը չի զիջելու համայնքի ղեկավարի աշխատավարձին: Վարչական տարածքում ղեկավարը կպահի հաստիք՝ մատուցվող ծառայությունների անհրաժեշտությունից ելնելով: Նա կմասնակցի բոլոր ավագանիների նիստերին, իր բնակավայրի հետ կապված ցանկացած հարց կկարողանա ընդգրկել անագանու նիստի օրակարգում: Վարչական ղեկավարը, բացի ֆինանսականից, պատասխանատու է տվյալ բնակավայրի բոլոր խնդիրների համար: Նախարարությունը հատուկ ձեռնարկ է սահմանել, թե ինչ կարգով պետք է աշխատի խոշորացված համայնքի ղեկավարը: Այսօր խոշորացման ճանապարհով է գնում աշխարհը, զարգացող երկրները: Լատվիան 1100 համայնքի խոշորացման արդյունքում արդեն ունի 65 համայնք, որոնք այսօր ծաղկում են: Մենք այլևս ժամանակ չպետք է կորցնենք, մինչեւ փետրվարի 12-ը ՀՀ-ում պետք է համայնքների խոշորացման գործընթացը ավարտված լինի: Խոշորացման արդյունքում մենք ձեւավորված միավորներ, մարդկային ու նյութական կապիտալի կուտակում, որոնցով էլ կզարգացնենք մեր երկիրը: Եվրամիությունը ֆինանսավորում է խոշորացված համայնքների ծրագրերը: Այն համայնքի ղեկավարը, ով նորմալ

գյուղի ղեկավար է աշխատել, կարող է նշանակվել նաև որպես վարչական ղեկավար, միգուցե եւ ընտրվի խոշորացված համայնքի ղեկավար: Մենք գնում ենք զարգացման ուղղությամբ: Դուք այդ դեպքում եւ պետությունից եք ֆինանսավորվելու եւ դրսից: Ապագայում դժվարություններ կլինեն կղիտարկենք,- ամփոփեց նախարարի պաշտոնակատարը: Վարդենիսի տարածքի համայնքների խոշորացման ծրագրի նախագծի շուրջ դիտողություններով եւ առաջարկություններով հանդես եկան համայնքների ղեկավարները:

Հանդիպման ավարտին ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի պաշտոնակատարը հույս հայտնեց, որ իր հաջորդ հանդիպումը տեղի կունենա Վարդենիսում, որի ընթացքում խոշորացված համայնքների համար արդեն համատեղ ուժերով կկազմվեն սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության որոշակի գործառնական ծրագրեր կառավարություն ներկայացնելու համար: